ԵՊՀ Օլիմպիադա – 2025 թ.
Հայոց պատմություն – 1 ին փուլ (20 միավոր)

1. Ե՞րբ է Վանա և Ուրմիո լճերի միջև Արամ անունով երկիր հիշատակվել. 0,25 մ.
   ա/ Ք.ա. XXIII դ. բ/ Ք.ա. XXII դ. սկզբում
   գ/ Ք.ա. XXII դ. վերջում դ/ Ք.ա. XXI դ. սկզբում
2. Որքա՞ն է Կուր գետի երկարությունը. 0,25 մ.
   ա/ 3455 կմ բ/ 1113 կմ գ/ 1137 կմ դ/ 2540 կմ
3. Քանի՞ հոգուց էր բաղկացած Ռուսախինիլի քաղաքի արքունի պալատը սպասարկող անձնակազմը. 0,25 մ.
   ա/ 1209 բ/ 2801 գ/ 5507 դ/ 7452
4. Կրասոսին քանի՞ հոգուց բաղկացած այրուձի խոստացավ տրամադրել Արտավազդ II-ը. 0,25 մ.
   ա/ 12 հազար բ/ 16 հազար գ/ 24 հազար դ/ 40 հազար
5. Որքա՞ն է Արմավիր բլուրի բարձրությունը. 0,25 մ.
   ա/ 52 մ բ/ 66 մ գ/ 76 մ դ/ 84 մ
6. Ե՞րբ է գրվել Հիպպոլիտիսի «Ժամանակագրությունը». 0,25 մ.
   ա/ 200-201 թթ. բ/ 234-235 թթ. գ/ 271-272 թթ. դ/ 297-298 թթ.
7. Քանի՞ հայ էր ապրում Էրզրումի էյալեթում XIX դարի սկզբում. 0,25 մ.
   ա/ 200 հազար բ/ 250 հազար գ/ 280 հազար դ/ 400 հազար
8. Ո՞վ էր 1920 թ. Հաճընի ինքնապաշտպանության բարձրագույն խորհրդի նախագահը. 0,25 մ.
   ա/ Պետրոս Սարաճյան բ/ Սարգիս Ճեպեճյան
   գ/ Ներսես Թավուգճյան դ/ Միհրան Տամատյան
9. Ո՞վ է տվել «նեոլիթյան (նորքարեդարյան) հեղափոխություն» բնորոշումը: 0,5 մ.
10. Ե՞րբ է առաջին անգամ հիշատակվում Հայասան: 0,5 մ.
11. Ո՞րքան գերի է տանում Սարդուրի II-ը Բաբելոնիայից: 0,5 մ.
12. Հայաստանում ո՞ր թվականներին է կառավարել Վոնոն Արշակունին: 0,5 մ.
13. Ո՞ր թվականներին է գահակալել Պերոզ թագավորը: 0,5 մ.
14. Ո՞ր թվականներին է Եսայի Հասան-Ջալալյանը եղել Գանձասարի կաթողիկոս: 0,5 մ.
15. Որքա՞ն էր 1807 թ. հունիսին Փոքր Ղարաքիլիսա գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտին մասնակից օսմանյան զորքերի թիվը: 0,5 մ.
16. Քանի՞ անդամ է ունեցել Երևանում 1882 թ. ձևավորված «Հայասեր-ազգասեր» խմբակը: 0,5 մ.
17. Ինչպե՞ս էր կոչվում Թավրիզում ՀՅԴ հիմնադրած զինագործական արհեստանոցը: 0,5 մ.
18. Ո՞ր թվականին է սկսել լույս տեսնել Թիֆլիսի «Մշակ» թերթը: 0,5 մ.
19. Ո՞ր թվականին է ծնվել Մոնթե Մելքոնյանը: 0,5 մ.
20. Ո՞ր քաղաքը դարձավ Հայկական բարեգործական ընդհանուր միության կենտրոնը 1939 թվականից: 0,5 մ.
21. 1930-ական թվականների իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
   ա/ Ձերբակալվեց Ներսիկ Ստեփանյանը:
   բ/ Երրորդ հարկի լուսամուտից ցած նետվեց Սահակ Տեր-Գաբրիելյանը:
   գ/ Սպանվեց Աղասի Խանջյանը:
   դ/ Խեղդամահ արվեց կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանը:
   ե/ Տեղի ունեցան Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունները:
   զ/ Կայացան ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրությունները:

է/ ՀԿ(բ)Կ կենտկոմը որոշեց փակել Էջմիածնի վանքը:
ը/ Ընդունվեց Խորհրդային Հայաստանի նոր սահմանադրությունը:
թ/ ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար ընտրվեց Գրիգոր Հարությունյանը:

1	2	3	4	5	6	7	8	9

22. Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ.
1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)

ա/ Բացվեց Հայոց համազգային շարժման առաջին համագումարը:
բ/ Աշխատանքները սկսեց ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների 1-ին համագումարը:
գ/ Հայաստանի և Ադրբեջանի կոմկուսի կենտկոմների լիագումար նիստերում առաջին քարտուղարներ Կ. Դեմիրճյանին և Ք. Բաղիրովին փոխարինեցին Սուրեն Հարությունյանն ու Աբդուռահման Վեզիրովը:
դ/ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստը քննարկեց «Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդների որոշումների մասին» հարցը:
ե/ Մ. Գորբաչովը դիմեց «Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորներին, ժողովուրդներին»:
զ/ Ստեփանակերտի պետական թատրոնի շենքում տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարը:
է/ ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը ԼՂԻՄ-ում սահմանեց կառավարման հատուկ ձև՝ Հատուկ կառավարման կոմիտե:
ը/ ԽՄԿԿ կենտկոմի «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին» որոշումով հայության արդարացի շարժումը որակվեց «ծայրահեղական»:
թ/ Լորիս Ճգնավորյանը հիմնեց Գյումրիի մշակութային կենտրոնը:

1	2	3	4	5	6	7	8	9

23. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)

1. Գրիգոր Տաթևացի	2. Հակոբ Ղրիմեցի	3. Ամիրդովլաթ Ամասիացի
4. Մխիթար Հերացի	5. Ներսես Շնորհալի	6. Մատթեոս Ուռհայեցի
ա. «Անգիտաց անպէտ»	բ. «Թուղթ ընդհանրական»	գ. «Մեկնութիւն տումարի»
դ. «Ժամանակագրություն»	ե. «Գիրք հարցմանց»	զ. «Ջերմանց մխիթարութիւն»

1	2	3	4	5	6

24. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ 1995 թ. սկսած պեղումների արդյունքում Պորտաբլուր հնավայրում (Ուրֆա-Եդեսիայից մոտ 17 կմ հարավ-արևմուտք) բացվեց մոլորակի վրա մինչ օրս հայտնի հնագույն տաճարական համալիրը (Ք.ա. X հազարամյակի կեսեր):
բ/ Ք.ա. 785-783 թթ. ընթացքում Արգիշտի I-ը արշավում է Դիաուխի, իր տերությանը միացնում Ուրմիա լճի ավազանի իշխանությունները:

գ/ Ք.ա. 93 թ. Տիգրան Մեծին են հպատակվում Վիրքն ու Աղվանքը:
դ/ Թագաժառանգ Տիգրան Կրտսերը գնաց պարթևների թագավոր Հրահատ IV-ի մոտ, որն ի դեմս նրա գտավ դաշնակից և իր դստերը կնության տվեց Տիգրանին:
ե/ Գրաբարում ավանդված բառապաշարը անցնում է 120 հազարից:
զ/ Մեծ Հայքի արևմտյան մասի կառավարումը Թեոդորոս I կայսրը հանձնեց կուսակալներին՝ կոմեսներին:
է/ 1724 թ. սկզբին Ռուսաստանից Արցախ ժամանեց հայազգի Իվան Կարապետը:
ը/ XX դարասկզբի համեմատ 1913 թ. Հայաստանի ձեռնարկություններում պղնձի արտադրությունն աճել էր մոտ 5 անգամ:
թ/ 1894 թ. գարնանը Սասունի լեռնեցիների վրա շարժվեց Զեքի փաշայի 10-հազարանոց զորքը՝ հրետանու ուղեկցությամբ:

1	2	3

25. Տրված տարբերակներից ընտրե՛ք 2 ճիշտ պնդումները: 1 մ. (2 X 0,5 մ.)
ա/ Ոգեպաշտությունը ֆետիշիզմն է:
բ/ Թուրքերը Վրաստանը անվանում են Ջորջեսթան:
գ/ Սարդուրիխինիլին կոչվում է նաև Հայկաբերդ:
դ/ Վանի թագավորությունում Բարեկենդանի տոնը կապված էր Նոր տարվա գալստյան հետ ու տոնվում էր փետրվարին՝ 1-2 շաբաթ:
ե/ Արամեական այբուբենն ու 24 տառ՝ ձախից աջ գրությամբ:
զ/ 1933-1937 թթ. Հայաստանում շահագործման հանձնվեց 26 արդյունաբերական ձեռնարկություն:
է/ Ավելի քան 3000 հայորդիներ զոհվեցին Հունաստանի պարտիզանական կռիվների ընթացքում:
ը/ 1969 թ. սկսվեց Հայկական ատոմակայանի շինարարությունը, որի առաջին էներգաբլոկը գործարկվեց 1979 թ.:

1	2

26. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
ա/ Հայերենի անջատվելը հնդեվրոպական ընդհանրությունից տեղի է ունեցել մոտ Ք.ա. IV հազարամյակի վերջերին:
բ/ Տիգրան II-ի տերությունում խոսում էին 15-ից ավելի լեզուներով:
գ/ Ք.ա. 5 թ. Օգոստոսը մեծ բանակով Հայաստան ուղարկեց իր որդեգիր Գրիգորիս Կեսարին, որը գահընկեց անելով Տիգրան IV-ին, թագավոր է հայտարարում նրա հորեղբորը՝ Արտավազդ III-ին (Ք.ա. 5-2 թթ.):
դ/ 1881 թ. մայիսին Կարինում Խաչատուր Կերեքցյանի ջանքերով հիմնադրվում է արևմտահայ ամենաազդեցիկ կազմակերպությունը՝ «Պաշտպան հայրենյացը»:
ե/ ՀՅԴ-ի վերաբերյալ ռուսական իշխանությունների անցկացրած դատավարության առթիվ 1912 թ. մարտի 10-ին հրապարակված դատավճռով անմեղ ճանաչվեց 92 մարդ:
զ/ Երկրորդ համաշխարհային պատերազմում առաջին հայ հերոսը տանկիստ Կարապետ Սիմոնյանն էր:
է/ 1943 թ. հունիսի 14-ին 390-րդ դիվիզիան կազմացրվեց:

ը/ 1986 թ. դեկտեմբերին Ալմա Աթայում ղազախ ուսանողները բողոքի ցույցի դուրս եկան ընդդեմ Ղազախստանի կոմկուսի ղազախ ղեկավարի փոխարեն ազգությամբ ռուս պաշտոնյայի նշանակման:
թ/ 1993 թ. հուլիսի 23-ին հայկական ուժերին հաջողվեց թշնամուն պարտության մատնել Աղդամի մոտ:

1	2	3

27. Գտե՛ք, առանձին գրե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)
«Սերգեյ Բուռնազյանը «Յակ-1» կործանիչով իրականացրել է 212 մարտական թռիչք և կործանել թշնամու 22 ինքնաթիռ»:

28. Գտե՛ք, առանձին գրե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)
«Խալիֆը 775 թ. աշնանը ապստամբների դեմ 30-հազարանոց զորք ուղարկեց, որը եկավ Խլաթ»:

29. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

Արևելքի ժողովուրդների Առաջին համագումարի (1920 թ. սեպտեմբերի 1-8, Բաքու) կողմից կազմավորված Արևելքի ժողովուրդների Քարոզչության և գործողության խորհրդի նախագահության սեպտեմբերի 18–ի «Եզրակացությունից»՝ ուղղված Կոմինտերնի գործկոմի նախագահությանը և ՌԿ(բ)Կ կենտկոմին (պատճենը՝ ՌՍԴԽՀ արտգործժողկոմատին)

«Ամեն գնով և հրատապ օգնել Թուրքիայում մարող ազգայնական շարժմանը, ...դրան հնարավոր է հասնել միայն թուրքական ազգայնական զորքերի հետ դաշինքում Հայաստանի վրա հարձակման միջոցով: ...Թուրքական զորքերը կսկսեն հարձակումը Հայաստանի վրա, իսկ մենք մեր ամբողջ մամուլով և հրապարակայնորեն Եվրոպայում ահավոր աղմուկ կբարձրացնենք հայ–թուրքական նոր կոտորածների և դրանք մեկընդմիշտ դադարեցնելու անհրաժեշտության մասին, այդ կոտորածներին վերջ տալու պատրվակով մեր զորքերը կմտնեն Հայաստան ...որտեղ կհաստատվի խորհրդային իշխանություն...

Արևելքում հեղափոխությունը փրկելու համար անհրաժեշտ են խորհրդային զորքերի անհապաղ հարձակումը Հայաստանի վրա և Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը»:

ա. Ե՞րբ էր նախաստորագրվել խորհրդա–քեմալական «Սրտագին և անկեղծ բարեկամության» պայմանագիրը:
բ. Ե՞րբ սկսվեց թուրքական բանակի ներխուժումը ՀՀ տարածք:
գ. Ե՞րբ, ինչպես ծրագրվում էր փաստաթղթում նշված հանգամանքներով, կարմիր բանակը մտավ ՀՀ տարածք:

30. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 0,5 մ (սխալի դեպքում՝ 0 մ.)
Արմենիայում, որը Ասորեստանից վերև է, նրանք կտրում են ուռենիներ, որոնցով պատրաստում են նավի կողերը և դրանք պատում կավե ծածկով, նավի հատակի նման... Այդ նավերը պատրաստում են և՛ շատ մեծ, և՛ շատ առավել փոքր:
ա. Ո՞վ է այս տողերի հեղինակը:
բ. Նա ե՞րբ է ապրել:

31. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 0,5 մ (սխալի դեպքում՝ 0 մ.)
Բարձրյալն Աստված թող... Ձեր սրտի մեջ ներշնչի հավատի զգացումները՝ ազատելու համար բոլոր քրիստոնյաներին և հատկապես մեր ազգին:
ա. Ո՞վ է այս տողերի հեղինակը:
բ. Ո՞ւմ են դրանք ուղղված:

Հանձնաժողովի նախագահ՝ ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆ. Է. Մինասյան

29.03.2025 թ.

<u>Առաջադրանքների պատասխաններ</u>

(20 միավոր)

1. ա/ Ք.ա. XXIII դ. — 0,25 մ.
2. բ/ 1113 կմ — 0,25 մ.
3. գ/ 5507 — 0,25 մ.
4. բ/ 16 հազար — 0,25 մ.
5. գ/ 76 մ — 0,25 մ.
6. բ/ 234-235 թթ. — 0,25 մ.
7. դ/ 400 հազար — 0,25 մ.
8. Պետրոս Սարաճյան — 0,25 մ.
9. Գորդոն Չայլդ — 0,5 մ.
10. Ք.ա. XIV դ. — 0,5 մ.
11. 40 հազար — 0,5 մ.
12. 12-16 թթ. — 0,5 մ.
13. 459-484 թթ. — 0,5 մ.
14. 1701-1728 թթ. — 0,5 մ
15. 20 հազար — 0,5 մ
16. 30 — 0,5 մ
17. Խարիսխ — 0,5 մ
18. 1872 թ. — 0,5 մ
19. 1957 թ. — 0,5 մ
20. Նյու Յորք — 0,5 մ
21. Ժամանակագրական ճիշտ հաջորդականություն — 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)

1	2	3	4	5	6	7	8	9
ա	գ	ը	բ	թ	զ	դ	ե	է

22. Ժամանակագրական ճիշտ հաջորդականություն — 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)

1	2	3	4	5	6	7	8	9
ը	ե	գ	դ	է	բ	զ	ա	թ

23. Համապատասխանեցում — 1,5 մ. (յուրաքանչյուրը՝ 0,25 մ.)

1	2	3	4	5	6
ե	գ	ա	զ	բ	դ

24. 3 ճիշտ պնդումներ — 1,5 մ. (յուրաքանչյուրը՝ 0,5 մ.)

1	2	3
զ	է	ը

25. 2 ճիշտ պնդումներ — 1 մ. (յուրաքանչյուրը՝ 0,5 մ.)

1	2
գ	զ

26. 3 սխալ պնդումներ — 1,5 մ. (յուրաքանչյուրը՝ 0,5 մ.)

1	2	3
գ	ե	է

27. Սխալի ուղղում. գրված է ***212***, պետք է լինի՝ ***224***: — 1 մ. (յուրաքանչյուրը՝ 0,5 մ.)
28. Սխալի ուղղում. գրված է ***աշնանը***, պետք է լինի՝ ***գարնանը***: — 1 մ. (յուրաքանչյուրը՝ 0,5 մ.)
29. Աշխատանք սկզբնաղբյուրի հետ: — 1,5 մ. (յուրաքանչյուրը՝ 0,5 մ.)
    ա. 1920 թ. օգոստոսի 24–ին
    բ. 1920 թ. սեպտեմբերի 23–ին
    գ. 1920 թ. նոյեմբերի 29–ին
30. Աշխատանք սկզբնաղբյուրի հետ: — 0,5 մ
    ա. Հերոդոտոս
    բ. Ք.ա. V դար
31. Աշխատանք սկզբնաղբյուրի հետ: — 0,5 մ
    ա. Խաչատուր Գաղատացի
    բ. Լյուդովիկոս XIV